ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) իր 2024 թվականի գործունեության և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերստուգման նպատակով արտաքին անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

Մրցույթին կարող են մասնակցել այն աուդիտորական կազմակերպությունները, որոնց մոտ բացակայում են «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված արգելքները, և որոնք միաժամանակ բավարարում են հետևյալ չափանիշներին՝

- Ընկերության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպությունը պետք է լինի «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված կառույցի անդամ:

- Աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա ապահովագրության կամ բանկային ոլորտի աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ, ընդ որում, այս չափանիշը չի տարածվում ըստ միջազգային խմբի տարեկան համախառն հասույթի մակարդակի առաջին 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների վրա:

- Աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է լինի Մասնագիտացված կառույցի անդամ, ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում և միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորման վկայական (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

- Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է լինեն Մասնագիտացված կառույցի անդամ, ունենան աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև՝ Մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորում կամ միջազգային հաշվապահական կամ աուդիտորական որակավորում (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ):

- Ընկերության և աուդիտորական կազմակերպության միջև պայմանագիրը կարող է կնքվել մինչև 3 տարի ժամկետով: Աուդիտորական կազմակերպությունը կարող է իրականացնել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անընդմեջ առավելագույնը 6 տարի, ընդ որում, տվյալ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել Ընկերության աուդիտը առավելագույնը 3 տարի: Աուդիտորական կազմակերպությունը 6 տարի անընդմեջ աուդիտի իրականացման դեպքում չի կարող իրականացնել Ընկերության աուդիտը առնվազն 3 տարի:

Մրցույթի պայմաններն են՝

1) Աուդիտի իրականացման ժամկետն է՝ համապատասխան պայմանագրի կնքումից մինչև 2025 թվականի ապրիլի 15-ը ներառյալ,
2) Աուդիտը պետք իրականցվի երկու փուլով՝ առաջին փուլի ավարտը պետք է լինի ոչ ուշ, քան 2024թ. դեկտեմբերի 27-ը: Առաջին փուլի ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան հաջորդ տարվա հինգերորդ աշխատանքային օրը, աուդիտորական կազմակերպությունը, ներկայացնում է կարճ միջանկյալ հաշվետվություն կատարված աշխատանքի վերաբերյալ պարտադիր ներառելով հետևյալ տեղեկատվությունը՝
   a) Ընկերության տեխնիկական պահուստների ճշտության, կիրառված մոտեցումների և այդ պահի դրությամբ ակնկալվող լրացուցիչ պահուստների ստեղծման անհրաժեշտությունը,
   b) ակտիվների արժեզրկման պահուստիների ճշտության և այդ պահի դրությամբ ակնկալվող լրացուցիչ պահուստների ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ,
   c) Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվառման ճշտության, կիրառված մոտեցումների և այդ պահի դրությամբ ակնկալվող լրացուցիչ ֆինանսական արդյունքների ստեղծման անհրաժեշտությունը:

Վերը նշված տեղեկատվությունը Ընկերությունը օգտագործելու է 2024թ. 4-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար:

3) Աուդիտորական եզրակացությունը և «Նամակ ղեկավարությանը» (աուդիտորական հաշվետվություն) փաստաթղթերը պետք է կազմվեն հայերենով և անգլերենով, ընդ որում, երկու լեզուներով կազմված փաստաթղթերն էլ պետք է ունենան միևնույն իրավաբանական ուժ: Աուդիտորական եզրակացությունը և «Նամակ ղեկավարությանը» (աուդիտորական հաշվետվություն) փաստաթուղթը պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան մինչև 2025 թվականի ապրիլի 15-ը ներառյալ,
4) Աուդիտը պետք է կատարվի Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան,
5) Աուդիտը պետք է ներառի Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

Աուդիտի աշխատանքները պետք է ընդգրկեն՝

- 2024թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտը և աուդիտորական եզրակացության ներկայացումը:

- 2024թ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտի արդյունքում կազմված «Նամակ ղեկավարության» փաստաթղթի ներկայացումը:

4. Մրցույթի կազմակերպման վայրն՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16, 1/1 տարածք,
5. Մրցութային առաջարկները՝ Տեխնիկական և Ֆինանսական հայտերը, առանձին, սոսնձված և ստորագրված փակ ծրարներով, մեկ կնքված փաթեթով, հայերենով պետք է Ընկերություն ներկայացվեն 2024 թվականի օգոստոսի 26-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 10-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 17:30 ներառյալ,

<u>Մրցույթի մասնակիցները Տեխնիկական հայտում պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը՝</u>

ա) ծառայությունների մատուցման բնութագիրը,

բ) աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները,

գ) այն Ընկերությունների ցանկը, որոնց նախորդ հաշվետու տարվա ընթացքում մատուցվել են նմանատիպ ծառայություններ,

դ) աուդիտի աշխատանքներին մասնակցող՝ միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորում ունեցող աշխատակիցների (այդ թվում՝ աուդիտորական խմբի ղեկավարի) անունները, նրանց աշխատանքային փորձը և քանակը,

ե) մրցույթի մասնակցի հայեցողությամբ՝ իր կողմից մատուցվող ծառայությունների որակը հաստատող այլ անհրաժեշտ տեղեկություններ:

<u>Մրցույթի մասնակիցները Ֆինանսական հայտում պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը՝</u>

ա) աուդիտի իրականացման ընդհանուր գինը (ներառյալ բոլոր տեսակի հարկերն ու ծախսերը),

բ) աուդիտի իրականացման ընդհանուր գնի վճարման եղանակն ու պայմանները,

գ) մասնագիտական գործունեության ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրությունը և ռիսկերի բավարար փոխհատուցման չափը

դ) մրցույթի մասնակցի հայեցողությամբ՝ ծառայությունների մատուցման ֆինանսական կողմին վերաբերող, ինչպես նաև լրացուցիչ այլ տեղեկություններ:

Մրցույթի մասնակիցները տեխնիկական և ֆինանսական հայտերի հետ՝ մեկ ծրարով պետք է ներկայացնեն հավաստում առ այն, որ բավարարում են սույն հայտարարության մեջ նշված մրցույթի մասնակիցներին ներկայացվող չափանիշներին և մրցույթի պայմաններին:

Մրցութային առաջարկները կբացվեն և կամփոփվեն մրցութային հանձնաժողովի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 15:00-ին, Ընկերությունում՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16, 1/1 տարածք հասցեում և մրցույթի մասնակիցները՝ վեջիններիս ցանկությամբ, կարող են ներկա գտնվել փաթեթների բացման գործընթացին: Մրցույթի հաղթող կճանաչվի ամենաբարձր միավոր հավաքած աուդիտորական կազմակերպությունը:

Մրցույթում հաղթող ճանաչված անկախ աուդիտորական կազմակերպությունը «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաղթող ճանաչված անձ հաստատվելուց հետո վերջինիս հետ համապատասխան պայմանագիրը կկնքվի ոչ ուշ քան մինչև 2024 թվականի հոկտեմբերի 16-ը:

Լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի պատճենը ստանալու համար կարող եք դիմել՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ՝ ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 16, 1/1 տարածք, կամ զանգահարել +374 11 56 04 04 հեռախոսահամարով (էլ. հասցե՝ Tigran.Harutyunyan@armeniainsurance.am):